Սորանով վերջացնում եմ Ամաղուի Նորավանքի ամփոփ պատմութիւնը։

(Շարունակելի) ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

ԱԶԳԱՅԻՆ

Կիրակի, յունիս ամսոյ 3 ին Ս. Աթոռումս մեծ հանդիսով տօնուեցաւ Ս. Էջմիածնայ տօնը։ Շաբաթ երեկոյեան Նորին Օծութիւնը նախատօնակին եկեղեցի իջաւ հանդիսաւոր կերպով։ Բոլոր միաբանք շուրջառազգեստք, երկու վարդապետք և երկու սարկաւագունք բուրվառներով. քշոցակիրներ, կերոնակիրներ ու խաչ ու խաչուարակիրներ հանդիպեցան Նորին Օծութեան Վեհարանի դրան, ուր Վեհափառ Հայրապետը շուրջառ առնելով մտաւ ամպհովանու տակ և խաչը ձեռին օրհնում էր երկու կողմում խռնուած բազմութիւնը։ Հայրապետի առաջին տանում էին Կաթողիկոսական քօղը, հովուական գաւազան ու խաչը, չորս բուրվառակիրները խնկարկում էին։ Երգեցիկ խումբը շարական երգելով առաջնորդեց դէպի եկեղեցին, որ լիքն էր բազմութեամբ։

Հանդիսականք կանգնեցան Իջման սեղանի առաջ, որ լուսաւորուած էր նրան շրջապատող բազմաթիւ կանթեղների և մոմերի լուսով։ Նորին Օծութեան համառօտ մաղթանք կատարելից յետոյ, սկսաւ երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը Իջման սեղանի առաջ։ Երեկոյեան հրավառութիւն էր Տաճարի բակում և խուռն բազմութիւն շրջում էր զուարճանալով գեղեցիկ տեսարանով։ Ճեմարանի երգեցիկ խումբը Վեհարանի առաջ կանգնած երգում էր ազգային երգեր։

Միւս օր առաւօտեան ժամերգութեան ու Ս. պատարագին նոյնպէս ներկայ էր Նորին Օծութիւնը։ Կէս օրին Ս. Աթոռոյս սեղանատանը պատրաստած էր ճոխ հացկերոյթ, հրաւիրուած էին

Վաղարշապատի բոլոր պաշտօնատար անձինք և պատուաւորք: Ինքը Նորին Օծութիւնը հասարակաց սեղանն իջաւ ճաշելու։ Հայրապետի գմբեթազարդ Աթոռը զարդարած էր գորգերով ու ծաղիկներով: Ճաշի ժամանակ Նորին Օծութիւնն բարեմաղթութիւն անելով առաջարկեց Նորին մեծութեան Թագաւոր Կայսեր և բոլոր ընտանեաց կենաց, Ս. Էջմիածնի հաստատութեան և Հայ ազգի բարօրութեան բաժակներն, որոնք դատարկուեցան կեցցէներով. իւրաքանչիւր բաժակի ժամանակ երգեցիկ խումբը երգում էր յարմարաւոր օրհներգ և շարական: Շնորհունակ Կիւրեղ վարդապետ Սրապեանը խօսեց ճառ, որով ցոյց տուեց, որ Ս. Աթոռոյս միաբանութեան վերայ պարտք կայ ազգը սերտութեամբ կապելու Ս. Աթոռի հետ և մաքառելու այն անտարբերութեան դէմ, որ տակաւ առ տակաւ սպրդում է ժողովրդի մէջ:

Սեղանի վերջում Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոսն առաջարկեց Նորին Օծութեան կենաց բաժակը մաղթելով առողջ ու երկար կեանք և յաջողութիւն ձեռնարկութեանց մէջ: Բաժակը կեցցէներով դատարկուեցաւ. յոտնկայս:

Երեկոյեան կրկին ճրագալոյց էր Տաճարի բակում և հրախաղութիւնք. երգեցիկ խումբը երգում էր ազգային երգեր: Բազմութիւնը խուռն էր: Երկու երեկոյ էլ Տաճարի մեծ կաթուղիկէի խաչը լուսաւորուած էր գոյնզգոյն լապտերներով:

ՀԱՇԻՒ ԵԼԵՒՄՏԻՑ

Հայուհեաց բարեգործական ընկերութեան Թիֆլիզում, սկսեալ 1 մարտի 1889 թ. ց1ն յունվարի 1890 թ.

ՄՈՒՏՔ.

Անցեալ տարուանից մնացած է՝

1)	Տոկոսաբեր արժէտոմսեր ի գումարի . . .	10268	40
2)	Ընթացիկ հաշիւ առևտրական բանկում . . .	1958	68